<<ՀՀ Լոռու մարզի Ջրաշենի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ի

Ընթերցանության խմբակի տարեկան պլան

Խմբակավար՝ Գոհար Թորոսյան

Շաբաթական՝ 1 ժամ

Տարեկան՝ 34 ժամ

(1-ին կիսամյակ՝ 15 ժամ, 2-րդ կիսամյակ՝ 19 ժամ)

7- րդ դասարան

**Ընթերցանության ինտերակտիվ խմբակ**

Խմբակը իրականացվում է «Zartnir» Կրթական ՀԿ-ի մեթոդական աջակցությամբ, որի նպատակը մարզերի երեխաների համար 21-րդ դարի կրթությանը համապատասխան հնարավորություններ ստեղծելն է:

## Խմբակի նպատակները

ա) Օգնել հասկանալ գրքի բովանդակությունը:
բ) Ցանկություն առաջացնել նրանց մոտ, ովքեր ստիպված են կարդում:
գ) Արթնացնել ընթերցանության հանդեպ հետաքրքրություն նրանց մոտ, ովքեր չեն կարդում:
դ) Գրքի հետ խնամքով վերաբերվելու մշակույթի ձևավորում:

## Վերջնարդյունքները

Հասկանա և ընկալի ուսումնասիրվող թեմաների բովանդակությունը:
Կարողանա համադրել առօրյա կյանքում հանդիպող իրավիճակների հետ:
Կարողանա մեկնաբանել հերոսների արարքները
Կարողանա սեփական կարծիքն արտահայտել կարդացած թեմաների մասին:

**Ընդհանուր նկարագրություն**

ա) Երեխաները ստանում են գիրք և ամեն դասից առաջ կարդում նախապես որոշված էջերի քանակից ոչ պակաս:
բ)Դասերի հաճախականությունը՝ շաբաթական 1 անգամ:
գ) Դասի ընթացքը՝ 40-90 րոպե:
դ) Դասը կարող է կազմված լինել տարբեր հատվածներից՝ ինտերակտիվ քննարկումներ, հարցեր, պատասխաններ, բանավեճեր, թատերական բեմադրություններ, էսսեներ:
ե) Ամեն 4-րդ կամ 5-րդ դասին աշակերտները պատրաստվում են հավաքել գրքերը:

| հ/հ | Ընթերցվող գիրքը | Մեթոդներ | Նպատակներն ու վերջնարդյունքները | Ժամեր |
|---|---|---|---|---|
| 1 | **Ծանոթություն** | -Ճանաչի՛ր ինքդ քեզ<br>-Հարցաթերթիկ(ակնկալիքներ)<br>-Կանոնակարգեր և ընթացակարգեր<br>-Հմտությունների քարտի կանոնների բացատրություններ | -Ծանոթանալ խմբակի նպատակներին<br>-Ձևավորել ընթացակարգեր,կանոններ<br>-Ստեղծել թիմային մտածողություն | 1 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2 | **Վիլյամ Սարոյան «Մայրի՛կ, ես սիրում եմ քեզ»** | -Ինտերակտիվ դասախոսություն<br>-Քննարկման հարցեր<br>-Քրոնոլոգիական աղյուսակ<br>-Նախադասությունների շարունակում<br>-Բանավեճ<br>-Կրթական խաղեր (առցանց գործիքների միջոցով)<br>-Էսսե<br>-Շարադրություն | -Մտապահել հեղինակի մասին կարևոր դրվագներ<br>-Պատմել ստեղծագործության բովանդակությունը<br>-Կազմել գրքի փաստերի հիման վրա հարցեր<br>-Վերլուծել կերպարների գործողությունները<br>-Ստեղծել նոր ավարտ<br>-Գնահատել հերոսներին իրենց գործողություններով<br>-Զարգացնել հարց տալու մշակույթը<br>-Ձևավորել հարցերին ստեղծագործ պատասխան տալու հմտություն<br>-Քննարկում վարելու հմտություն ձևավորել | 3 |
| 3 | **Ջորջ Օրուել «Անասնա ֆերմա»** | -Զրույց-դասախոսություն<br>-Քննարկման հարցեր<br>-Կրթական խաղեր<br>-«Ստեղծագործության խորհրդանիշը»<br>-Հանդիպում գրական կերպարի հետ<br>-Մամլո ասուլիս հեղինակի հետ<br>-Էսսե | -Իմանալ որոշակի տեղեկություններ հեղինակի և նրա ստեղծագործության մասին<br>-Վերարտադրել ստեղծագործության բովանդակությունը<br>-Կազմել քննարկման հարցեր կարդացածի հիման վրա<br>-Մշակել էսսեներ գրելու կանոնները, կիրառել գրավոր խոսքում<br>-Նախագծել գրական կերպարի հետ հանդիպման նյութը<br>-Զարգացնել ստեղծագործական միտքը<br>-Արժևորել գրական ստեղծագործությունը | 4 |
| 4 | **Անտուան դը Սենտ-Էքզյուպերի «Փոքրիկ իշխանը»** | -Նամակ գրական կերպարներին<br>-Քննարկման հարցեր<br>-Հարցաթերթիկներ<br>-Խճանկար<br>-Բանավեճ<br>-Էսսե<br>-Բեմադրություն | -Թվարկել մի քանի դրվագներ հեղինակի կյանքի վերաբերյալ<br>-Ստեղծել սցենար<br>-Համեմատել հերոսներին, վերլուծել կերպարներն ու գործողությունները<br>-Զարգացնել վերլուծական միտքը<br>-Զարգացնել նկարչական հմտություններ | 4 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 5 | **Ռոբերտ Լուիս Ստիվենսոն «Գանձերի կղզին»** | -Ինտերակտիվ դասախոսություն<br>-Մտագրոհ<br>-Քննարկման հարցեր<br>-Ճանապարհորդության քարտեզ<br>-Պատկերասրահում շրջայց<br>-Օձեր և աստիճաններ<br>-Կրթական խաղեր<br>-Դի՛րք զբաղեցրու(կարծիքների սանդղակ)<br>-Էսսե | -Իմանալ հեղինակի կյանքի կարևոր դրվագներ<br>-Կազմել քննարկման հարցեր<br>-Կարողանալ առաջարկել լուծումներ և տարբերակներ<br>-Մտքերն արտահայտել նկարների միջոցով<br>-Ձևակերպել մտքեր՝ պարզ ,հստակ, դիպուկ<br>-Արտահայտել սեփական տեսակետը, գործնականում կիրառել բանավեճի հմտություններ<br>-Կարողանալ ինքնուրույն որոշումներ կայացնել<br>-Սովորել համագործակցել | 5 |
| 6 | **Հարփըր Լի«Ծաղրասարյակ սպանելը»** | -Ինտերակտիվ դասախոսություն<br>-Քննարկման հարցեր<br>-Շղթա<br>-Օգնի՛ր հերոսին<br>-Էսսե | -Մտապահել հեղինակի կյանքի վերաբերյալ կարևոր դրվագներ<br>-Մշակել սցենարներ<br>-Զարգացնել էսսե գրելու կարողությունը<br>-Նախագծել քննարկման տարբեր ձևեր<br>-Էսսե | 3 |
| 7 | **Ջեկ Լոնդոն «Սպիտակ ժանիքը»** | -Զրույց- քննարկում<br>-Քննարկման հարցեր<br>-ԴԲՕՀ(դիրքորոշում, բացատրություն, օրինակ, հետևանք)<br>-Օգնի՛ր հերոսին<br>-Էսսե<br>-Նամակ հերոսին<br>-Հմտության քարտեր | -Պատմել հեղինակի կյանքի կարևոր դրվագների մասին<br>-Թվարկել մի շարք հայտնի ստեղծագործություններ<br>-Վերարտադրել բովանդակությունը<br>-Բացատրել հերոսի արարքների դրդապատճառները<br>-Ձևավորել ինքնուրույն տեսակետ արտահայտելու հմտություն | 4 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 8 | **Օսկար Ուայլդ«Դորյան Գրեյի դիմանկարը»** | -Զրույց- քննարկում<br>-Քննարկման հարցեր<br>-Մտագրոհ<br>-Կրթական խաղեր<br>-Հարցազրույց հերոսի հետ<br>-Դու՝ ինձ, ես՝ քեզ<br>-Էսսե | -Մտապահել հեղինակի կյանքի կարևոր դրվագներ<br>-Վերարտադրել ստեղծագործության բովանդակությունը<br>-Մշակել հարցեր քննարկելու համար<br>-Նախագծել հարցազրույց հերոսների հետ<br>-Վերլուծել դեպքեր, գործողություններ<br>-Առաջարկել նոր լուծումներ<br>-Զարգացնել թիմային մտածողություն<br>-Ձևավորել գնահատելու, լսելու հմտություններ<br>-Զարգացնել հաղորդակցական հմտություններ | 4 |
| 9 | **Է.Հեմինգուեյ<< Ծերունին և ծովը>>** | -Զրույց- քննարկում<br>-Քննարկման հարցեր<br>-Մտագրոհ<br>-Հարցազրույց հերոսի հետ<br>-Դեպքերի վերլուծություն<br>-Էսսե | -Մտապահել հեղինակի կյանքի կարևոր դրվագներ<br>-Վերարտադրել ստեղծագործության բովանդակությունը<br>-Մշակել հարցեր քննարկելու համար<br>-Նախագծել հարցազրույց հերոսի հետ<br>-Վերլուծել դեպքեր, գործողություններ<br>-Ձևավորել գնահատելու, լսելու հմտություններ<br>-Ֆիլմի դիտում և քննարկում | 4 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1<br>0 | **Գարեգին Բես<< Զինվորի ուղին>>** | Զրույց- քննարկում<br>-Քննարկման հարցեր<br>-ԴԲՕՅ(դիրքորոշում, բացատրություն, օրինակ, հետևանք)<br>-Օգնի՛ր հերոսին<br>-Էսսե<br>-Նամակ զինվորին | Իմանալ որոշակի տեղեկություններ հեղինակի և նրա ստեղծագործության մասին<br>-Վերարտադրել ստեղծագործության բովանդակությունը<br>-Կազմել քննարկման հարցեր կարդացածի հիման վրա<br>-Նախագծել գրական կերպարի հետ հանդիպման նյութը<br>-Զարգացնել ստեղծագործական միտքը<br>-Արժևորել գրական ստեղծագործությունը<br>-գրել բաց-նամակ՝ ուղղված զինվորին | 2 |

## Նյութատեխնիկական բազա

Ընթերցանությունն իրականացվում է թեմաներում ներկայացված և քննված խնդիրները վեր հանելու, հերոսների հոգեբանական վիճակները վերլուծելու նպատակով:Ընթերցանության ընթացքում օգտագործվում է հեղինակների երկերը՝ գրքային և էլեկտրոնային տարբերակներով:

# Օգտագործված գրականության ցանկ


Վիլյամ Սարոյան <<Մայրի՛կ,ես քեզ սիրում եմ >>, Անտարես 2018թ.
https://grapaharan.org
Անտուան դը Սենտ Էքզյուպերի << Փոքրիկ իշխանը>>,
<<Լույս>>հրատարակչություն, Երևան 1985թ.
http://books.panarme.info

Հարփըր Լիի<<Ծաղրասարյակ սպանելը>>Երևան, «Հայաստան» հրատ., 1965,
Ջեկ Լոնդոն:«Սեր դեպի կյանք» պատմվածքների հավաքածու:
«Приокское книжное издательство» հրատարակչություն, Տուլա,1981թ.
Օսկար Ուայլդ << Դորյան Գրեյի դիմանկարը>> Էդիթ Պրինտ, Երևան 2012թ.
Գարեգին Բես,ՀայպետՀրատ, Երևան 1960թ.